

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:  
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք զինում են ուղղակի  
Тифлисе. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տոն օրերից):

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են  
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

## ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Հարկաւոր կը լինէր:—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ:  
Նամակ Ախալքալաքից: Ներքին լուրեր:—ԱՐՏԱ-  
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Թիֆլիսից: Արտա-  
քին լուրեր:—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:  
—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲՈՐՍԱ:—ԲԱՆԱՍԻ-  
ՐԱԿԱՆ: Նամակ Թիֆլիսից:

## ՀԱՐԿԱՒՈՐ ԿԸ ԼԻՆԵՐ

Ոչ մի ժամանակ կովկասեան և անդը-  
կովկասեան հայերի մէջ պղծաւ բազմա-  
թիւ գրքեր մայրենի լեզուով չէին հրատա-  
րակվում, որքան այժմ:

Այդ ուրախելի երեւոյթը մի բանի վրա  
մեզ մտածել տուեց: Յաւալի է որ մեր բո-  
լոր հեղինակներն ու հրատարակիչները ի-  
րանց ամեն մի նոր գութա եկած գրքի մի  
մի օրինակ չեն ուղարկում Վենեցիայի  
Միխիթարեան ուխտի ուսումնական միաբան-  
ներին: Դա, մեր կարծիքով, անպատճառ  
հարկաւոր կը լինէր և ահա ինչ պատ-  
ճառներով:

Նախ՝ Վենեցիայի Ս. Ղազարի հայոց  
վանքը միակ տեղ է հայերիս մէջ, որ ունի մի  
հարուստ և բարեկարգված գրադարան, որի  
մէջ շատ և շատ ցանկալի է թէ լինի ամ-  
բողջ երկրագնդի վրա հրատարակված հա-  
յոց բոլոր լրագրիչների, ամսագրիչների, գրք-  
քերի և բրտիչների մի մի օրինակ:

Երկրորդ՝ Միխիթարեան ուխտի պատւելի  
հայրերը շատ քիչ ծանօթ են մեր, այսինքն  
անգրկովկասեան հայերիս, կեանքի հետ,  
մեր նոր գրականութեան, մեր այժմեան մտա-

ւոր շարժման հետ: Եթէ յարգելի սուրբ-  
հայրերը միջոց ունենային այդ բոլորը ու-  
սումնասիրելու, նրանք, ճշմարիտ գիտնական  
մարդիկ լինելով, մեր գրականութիւնը ու-  
սումնասիրելուց յետոյ գուցէ մի նոր միտք կը  
յայտնէին, մի նոր գաղափարով կը լուսա-  
ւորէին մեր այժմեան մտաւոր շարժումը,  
մեր կեանքն ու գրականութիւնը, գուցէ  
շատ բաներ կը բացատրէին մեզ որ մեզ  
ինքներին անյայտ ու անծանօթ է: Իսկ զրա  
համար հարկաւոր է նրանց ծանօթացնել  
մեր կեանքի, մեր գրականութեան հետ,  
հարկաւոր է նրանց գրադարանին ուղար-  
կել մեր հրատարակվող բոլոր հեղինակու-  
թիւնները, սկսած դասագրքերից ու ձեռ-  
նարկներից և վերջացնելով թատրոնական  
պիէսաներով, վէպերով ու ծանր յօդուած-  
ներով:

Վերջապէս անդադար կարգաւորվ մեր նոր  
գրականութեան արդիւնքները, իրանք Վե-  
նեցիայի սուրբ-հայրերն էլ, գուցէ, փոքր  
առ փոքր կենթարկվէին մեր գրականական,  
խակապէս բուն ժողովրդական, բնական ձեւ-  
երին, նմանապէս և մեր, արևելեան հայե-  
րիս, միակ կանօնաւոր և լոգիկական տա-  
ռա գրութեանը և գուցէ փոքր առ փո-  
քր կը թողնէին իրանց արուեստական, ան-  
մարտիկ, անբնական քերականական ձևերը,  
իրանց արուեստական, հրէշաւոր, անձոնի  
տառադրութեան և ուղղագրութեան ձևերը:

Վենեցիայի Միխիթարեանները ինչ կու-  
զէք գրքեր են հրատարակում: Նրանք  
գրագիտ են եւրօպական գրականութեան,  
եւրօպական կեանքի հետազոտութեամբ,  
անդադար հրատարակում են հայերէն գրք-

քեր եւրօպայի պատմութեան, կեանքի մա-  
սին,—բայց երբեք նրանց գրքերի մէջ չէք  
հանդիպի մի հայեացք ժամանակակից հա-  
յերի վրա, հայոց այժմեան կեանքի վրա,  
մի հետազոտութիւն հայոց նոր գրականու-  
թեան վրա, մի որ և է փոքր ի շատէ  
մշակված, ամբողջ յօդուած հայերի այժ-  
մեան մտաւոր շարժման վրա, այն հայերի,  
որոնք ոչ թէ խաղաղի կողմնակի վրա են  
ապրում, այլ բնակվում են խիտ կերպով  
իրանց հաւաքարեան, պատմական հայրենի  
հողի վրա:

Այդ բոլորը գրանդին է լինում, որ Միխի-  
թարեան հայրերը մեզ հետ, մեր կեանքի  
հետ, արդեան հայերի հետ ամենեւին ծա-  
նօթ չեն: Մենք ինքներս, գոնէ, պէտք է  
աշխատենք ծանօթացնել նրանց մեզ հետ,  
մեր մտաւոր շարժման հետ, անդադար ու-  
ղարկելով նրանց գրադարանին մեր բոլոր  
գութա եկող հրատարակութիւնները:

Շատ լաւ կը լինէր եթէ դա մեր բոլոր  
հեղինակների և հրատարակիչների մշտա-  
կան սովորութիւնը դառնար:

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՌԱՎՔԱՎԱՔԻՑ

Փետրվարի 17-ին

Քանիցս մենք ասել ենք որ կենր մեզանում մի  
ստորակ է իր ամուսնու ձեռքին: Վերջինս՝ որ  
դուրսը՝ փողոցում շատ անգամ ստորաքաշ սո-  
ղուն է, որ իւրաքանչիւր դէպքում թոյլ է տալիս  
ուրիշներին ունակիոյ անել իր մարդկային ար-  
ժանաւորութիւնը, տանը՝ իր փոքրիկ միապետու-

Հայոց պատգամաւորութիւն մը ներկայանալով  
կառավարչին կանօնաւորապէս տեղեկութիւն խն-  
դած է Կարնոյ գործոց վրայ: Պատգամաւորը ա-  
պաճութիւններ տուած են կառավարչին Ներք-  
կայի հայոց հաւատարիմ մնալու մասին: Մեր  
թերթերը եթէ ունենան կարեւոր տեղեկութիւններ  
կը զորշանան իրենք իրենց կողմէ հաղորդել:  
Պէտք է որ տեղույս եւրօպական լրագրիչ հրա-  
տարակէն դանդաղ որպէս զի հայ թերթերն ալ  
սիրտ աւնելով հաղորդեն: Պայտ հայք առ այժմ  
չեն խաղար ո՛ր և է դեր այս դէպքերու մէջ: Հան-  
դարտ նստած ենք և գո՛ւ կըլլանք ստանալով  
փոքր ինչ տեղեկութիւն: Սակաւթիւրք տանք  
միայն շատ յարաբերութիւն ունին եւրօպացի թղ-  
թակցաց հետ և ուղղութիւն կուտան անոնց:

Կարնոյ հարցը որչափ ալ կարեւոր ըլլայ և կեն-  
սական, չենք կրնար չը գրադել ուրիշ խնդիրնե-  
րով: Հրապարակի վրայ կայ այժմ կաթողիկոսա-  
կան ընտրութեան միջ խնդիրը: Բայց դեռ քիչ  
մը ժամանակ հարկաւոր է որպէս զի այս խնդ-  
րին ըլլայ բոլորեքս խնդիր: Մեր այս կաթո-  
ղիկոսական գործովը շատ կը զբաղին Պոլսոյ եւ-  
րօպական բոլոր թերթերը:

Կաթողիկոսական հարցը երկու մաս է կը բաղ-  
կանայ: Առաջին այն օրէնքը որոյ ենթակայ է  
մեր կաթողիկոսութիւնը. երկրորդ՝ կաթողիկոս  
ընտրութիւնը անձը:—Թողնելով առաջին մասն,  
կրնանք բռն թէ երկրորդ մասը ամենէն կենսա-  
կանն է: Ո՞վ պիտի ըլլայ մեզ կաթողիկոս. ո՞վ է  
այն անձը որ ընդհանուր վստահութիւն ներշն-  
չած ըլլայ հայոց:—Երբ կաթողիկոսութիւն մասնա-  
ւորը տարածվեցաւ, ամեն դասակարգի հայեր կ'  
Պոլիս սա հարցումը կենդին չով պիտի ըլլայ մեր  
կաթողիկոսը:—Պատասխանն ինքնին կուգար  
հետեւեալ պատրիարքը: Բայց կը յաջորդէր այդ

թեան մէջ՝ անդուստ բռնակալ է, մի կողմիտ իշ-  
խող է, որի կատարութեան, վայրենաբարոյու-  
թեան ասպարէզ է բացվում ընտանիքի մէջ: Գեռ  
սկզբից՝ օրիորդին յաճախ հակառակ սորա կամ-  
քին ամուսնացնում են այս կամ այն երիտասար-  
դի հետ, միայն թէ դա ունենար ամենապար-  
զի հետ, եթէ ոչ կարող է ցանցաւոր, անբարոյական,  
մաշված, այլ և այլ անխելով հիւանդ լինել, այդ  
մի և նոյն է:

Երկու ամուսնիներ մեղադրուանը շատ կար-  
ճատ է լինում. երբ անամական կիրքը յաղուրդ  
է ստանում, այդ ժամանակ ահա մերկ իրականու-  
թիւնը իր բոլոր անհրապարհ տեսքով ներկայա-  
նում է մեր տղամարդին:

Այդ միջոցին երեխաները մինը միւսի ետեւից  
աւելանում են: Տղամարդը որ անկարող է նրանց  
կերակրել, անիծում է իր շտապիւր, անիծում է  
իր բաղը, զղում է իր դասակներէն և իր սըր-  
տում ժողովված բոլոր չարութիւններ, մարձը, թա-  
փում է անպատասխան ետևի—կնոջ վրա, որ  
մարդու կարծիքով իր բոլոր դժբաղդութիւնների  
պատճառն է:

Ահա թէ ինչ պատճառներից են յառաջ գալիս,  
իմ կարծիքով, ամուսնիների մէջ տիրող անբաւա-  
կանութիւնները: Կան և ուրիշ պատճառներ, տա-  
կայն անցնենք իրողութեանը: Պատահել են դէպ-  
քեր երբ կատաղի տղամարդը, զինու չղու աղիւ-  
ցութեան տակ, խել է դաւակին մօր գլխից և  
մանկան գլուխը փչել է պատին խփելով... Շատ  
կանայք, իրանց ամուսնու ամենօրեայ ծեծին չը  
զիմանալով, վաղաժամ մահով գերեզման են իջել:  
Մինք՝ սովորութիւն ունենալով ամենաչնչին պատ-  
րուակներով արտաքսել տանից իր կնոջը և այն  
գիշերով, ձմեռայն ցրտից պաշտպան ունենալով  
լոկ ստորին սպիտակեղէնը: Էլ չեմ ասում այն  
բաղձածութիւնը, այն բաղձալան գրկանքները՝ ո-  
րոնց հանդիպում է կինը մեղանում: Անցեալ օր  
մի անցք պատահեցաւ այստեղ:

Սրանից մի ամիս առաջ վախճանիկեալ թիֆ-  
լիսցի մի այրի կին, որի դուստրը ամուսնացած

պատասխանին սա հարցումը. «Եւ ո՞վ պիտի կա-  
րենանք ընել մեզ պատրիարք»:

Ինչ որ կերելի այժմ, կաթողիկոսական ընտրե-  
լեաց մէջ Թիֆլիսի հայ եկեղեցականք միայն մէկ  
Ռուսիայ հայ եկեղեցական ընտրելի պիտի ցույց  
տան: Մակար սրբազանը: Ռուբլ անուայ շատ ծա-  
նօթ չէ: Անցեալները «Մասիս» հրատարակեց  
Ռուսիայէն մի թղթակցութիւն շատ նպատաստւոր  
սրբազանին համար: Հին ցույց կը տուէր Մակար  
եպիսկոպոսը իր պաշտօնին Ռուսիոյ հայ երե-  
տասարդութեան: Իսկ Թիֆլիսի հայերէն ամենէն  
հաւանական ընտրելիներն են Ներսէս, Խրիմեան,  
Մուրադեան սրբազանները: Մուրադեան եպիսկո-  
պոսի համար մի քանի անգամ գրեցիք թէ՛ լաւ  
համբաւ ունի: Մենք շատ մօտէն զննք  
ճանչցած և չենք տեսած աղգալին միջ գործի  
մը վրա որպէս զի գիտութեամբ կարենանք դատել:  
Փորձառու և աղգալին եկեղեցականները լաւ ճանչ-  
ցողներն են անոնք իրենց թէ՛ աղգը չը խառնուր ե-  
թէ Մուրադեան եպիսկոպոսը ամեն ընտրելիներ-  
էն վեր դասէ: Այլ այս անկարելի է քանի որ  
կան Ներսէս և Խրիմեան սրբազանները: Համբա-  
ւը մեծ աղգեցութիւն ունի: Ռուբլն առ այժմ  
ընտրելեաց առաջին կարգին մէջ են, Թիֆլիսի  
հայոց համար նախ՝ Ներսէս պատրիարքը, երկրորդ՝  
Խրիմեան սրբազան: Իսկ երկրորդ կարգը կուգան  
Մակար և Մուրադեան սրբազանները: Քանի մը  
խօսք բռնք միայն առաջիններուն վրայ: Ներ-  
սէս և Խրիմեան սրբազանները հայոց ամենէն ծա-  
նօթ եկեղեցականներն են: Բայց որչափ ծանօթ  
է անուններն, կարծենք իրենք սպիքան լաւ չեն  
ճանչցուած: Ո՞վ է անձնաւորութիւն աղկի ճանչ-  
նալու համար պէտք է նորա թերի կողմնին ալ  
զիմանալ: Զայս չենք կրցած ընել այս երկու ե-  
պիսկոպոսներուն, մասնաւոր Ներսէս սրբազանի

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՐԻՔԻՍՏԻՑ

Կ. Պոլիս, 12 փետրվարի

Սրկան հարցը Հայաստանի ապստամբական  
շարժման խնդիրն է միշտ: Շուտ կը մարէր այս  
հարցը թէ ճարակ չը տային եւրօպայի լրագրիչնե-  
րը: «Թայմս» զրադեցաւ այս խնդրով և գրած ա-  
ռաջնորդող յօդուածը մասնաւոր նշանակութեան  
արժանի է: «Քուեն. Պոլիս.» հրատարակեց երեք  
թղթակցութիւններ որը շատ ուշադրութիւն գրա-  
ւեցին: Յունվար 15-ի «Տէլէգր. Նիւզ» կը պարու-  
նակէ կարեւոր հեռագիրներ և յօդուած այս հարցի  
առթիւ: Անգղիայի աղետական միջ թերթը կար-  
ծիք կը յայտնէ թէ՛ Սուլթանը հաշտեցաւ հայոց  
պատրիարքին հետ Կարինի խնդրոյն պատճառաւ:  
Թրքասէր «Վաթիտէյ Ռիփիլ» մեզ աննպաստ է:  
Ինչ երկարեմք, այս գործը տպաւորութիւն բրած  
է եւրօպայի վրայ, մեր յոյսերէն աւելի: Թիֆլիս  
կառավարութիւնը ջանաց բնկանել այդ տպաւո-  
րութիւնը իր դեպքանայ ձեռք: Հոս լուր տարա-  
մեջին թէ՛ Պոլսոյ դեսպանը պահանջներ են ձեռ-  
բախկանելու Պոլիս դատուիլը և թէ 70 ան-  
ձներ հոս բերուած են: Այս լուրը ստուգութիւն  
չը գտաւ: Այժմ գրեց կը պարտի թէ՛ կեղծ են  
զանաւոր թուղթերն ու ստորագրութիւնը: Ռու-  
սիացի հայ դրամանկը մը չինած է եղեր զանոնք:  
Չկող կրնար հաւատ ընծայել այս լուրին ալ. գի-  
տենք ինչ նպատակաւ նետած են զայն հրապա-  
րակ:—Կառավարութիւնը չիօթ վիճակի մէջ է:  
Թէ ձեռքաւարկանքը ենթարկէ Գուրը խիստ  
պատժու, գործը քաղաքական կերպարանք առնե-

է այստեղացի մի արհեստավարի հետ: Հանգու-  
ցեալի մահից յետոյ, մնում է նրա խնամանայ որ-  
դին՝ որ մահը էր և որին տեղաւորել էին քրոջ  
մօտ: Քեռայրը՝ մի խոտաբարոյ մարդ, յարձակ-  
վում է կնոջ վրայ, ասելով որ չի պահի նրա եղ-  
բօրը: Ողորմելի կնոջ շուտաւարժ տանում է եղբօրը  
ներքնատունը և այնտեղ կրակարան է դնում մօ-  
տը որ տաքանայ, ու ինքը գնում է եկեղեցի: Ո-  
ղորմելի պատանու շորերը բռնվում են: Մինչև  
օգնութիւն են հասնում, խեղճը արդէն մեռած է  
լինում:

\*\*\*

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայրաքաղաքի ուսուցիչներում կարգում  
ենք հետեւեալը: «Polit. Corresp.» լրագրին հա-  
ղորդում են որ ուսուցիչները կ. Պօլսում, պ.  
Նէլիով, ներկայ ժամանակում աշխատում է հա-  
մաձայնութիւն կայացնել օսման համար կառավա-  
րութեան հետ նորերումս վախճանված ամենայն  
հայոց կաթողիկոս Գ. Ե. Գ. IV-ի յաջորդի ընտ-  
րութեան վերաբերութեամբ, որովհետեւ կաթողի-  
կոսի եկեղեցական իրաւասութիւնը տարածվում  
է թէ ուսուցչական և թէ թիւրքահայաստանի հա-  
յերի վրայ: Կ. Պօլսից ստացված տեղեկութիւննե-  
րին համաձայն, Գ. Ե. Գ. IV-ի յաջորդ համարում են  
Խրիստեան արքեպիսկոպոսին:

Կիրակի, 20-ին փետրվարի երաժիշտ պ. Կնի-  
նա իր երկրորդ կոնցերտը տուեց Թիֆլիսի Կը-  
րուժով ասված ժողովարանում: Կոնցերտը շատ  
լաւ աշխուժացաւ և դահլիճը լի էր բազմութեամբ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ մեզ գրում են: «Չեզ արդէն յայտ-  
նի կը լինի որ արանից մի քանի օր առաջ տե-  
ղական կուրում պարահանդէս (բալ) կար յօգուտ  
քաղաքիս հայոց դպրոցներին: Մի պարուն, որ բը-  
նական է նրանում և որ, ինչպէս երևում է,  
չէ սիրում հայերին, սկսեց քաղաքի իր բոլոր ծա-  
նօթներին համոզել որ այն երեկոյ չը գնան կը-  
րուք, որպէս զի օգուտ չը տան հայոց դպրոցնե-  
րին: Հասերը ուսանողից անգամ, որոնք ծանօթ  
էին պարունի հետ, պատասխանում էին նրան որ  
դա աղին վարմունք չէ և վճռել էին այնու ա-  
մենայնի գնալ պարահանդէս: Այն ժամանակ ինչ  
է անում պարունը. նա նոյն երեկոյ, երբ պէտք է  
կուրում բալ լինի, իր տանն էլ դիտմամբ խըն-  
ջոյք է տարում և հրակրում է շատերին իրան  
մօտ: Բայց շատերը, նոյն իսկ ուսանողից, պա-  
տասխանում են նրան, որ չեն կարող նրա հրա-  
ւելքը ընդունել, քանի որ այն երեկոյ կուր-  
էն

համար: Այդ երկու անձնաւորութիւնները նկա-  
տած ենք միշտ իր տիպաբար հայրենասիրութեան,  
կենդանի անձնաւորութիւնը հայ ազգին վշտացն  
ու յոյսերուն: Խրիստեան սրբազան կը ներկայաց-  
նէր ինքզինքը «հայերի ցեղոցը կենդանի պատկե-  
րը»: Իսկ Ներսէս սրբազան նկատուած է «այդ  
ցեղերու դարմանիչը»: Երբ տիրապետող զաղա-  
փարը հայրենասիրութեան գաղափարն է, այն  
ատեն շատ դժար է ստան մտքով քննութեան  
առնուլ ժողովուրդի մը դեկլարացիոն եղող անձին  
թիւնները: Պէտք է ջանջել, պէտք է կործանել  
ամեն անոնք որ կը շինեն:

Կան յատկութիւններ որք եթէ առաքելութիւն-  
ներ են Քրիստոսի պարզ վարդապետի մը համար,  
գոյց է մահացու միջոցը համարուին պատրիարքի  
մը կամ կաթողիկոսի մը համար: Խրիստեան սրբա-  
զան իբր պատրիարք ցոյց տուաւ այդ առաքելու-  
թիւնները կամ թերութիւնները, ինչպէս կուղե-  
բնէր: Պատրիարք Խրիստեանը պարզապէս էր և  
պարզ, Խրիստեան վարդապետին պէս: Ըլլալով աղ-  
ղի մը պատրիարքը աղքատական կեանքով, հեռու ա-  
մեն շուրջ, ամեն արտաքին ցոյցէ: «Ազգը պարտ-  
քի ներքն է, կըսէր, միթէ անկեղծ իր պարտքը»:  
— Բայց կը մոռնար թէ՛ Արեւելեան ժողովուրդ-  
ները արհամարհանօք կը հայան պիտական անձանց  
վրայ որք կարհամարհեն ունեւճառով պատմութե-  
ան: Պարզ էր նաեւ, շատ պարզ, իր տեսակցու-  
թեան մէջ: Անխտիկ կընդունէր ամեն ոք, անուշ  
էր ամենուն հետ, փոքրիկ և մեծի մէջ չէր գնի  
շատ տարբերութիւն, միշտ յիշելով Քրիստոսի  
վարդապետ ըլլալը: Սակայն մենք շատ կիրթ չենք  
և շուտով երես կանոնք: Մեր հին եպիսկոպո-  
սաց և պատրիարքաց աւանդութիւնն էր խոժոռ  
դէմք մը ունենալ: Խրիստեան սրբազան կարծես թէ  
ժամանակին հետ մարդիկ ալ յառաջացած են:

գնում: Այնու ամենայնիւ նախանձօտ պարունի  
մօտ խնջոյքը այն դիւրեր կայանում է: Բայց նոյն  
իսկ խնջոյքի ժամանակ պարունի բնակարանի  
գրեթէ բոլոր պատուհանների ապակիները անյայտ  
անձինք փչրում են քարերով և փայտերով:

ՂՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են, որ այդ քաղաքում  
երբ խոսակցութիւն է լինում, կաթողիկոսական  
խնդրի վրայ, գրեթէ ամենքի բերանից լսվում է  
«Երանի Ներսէս պատրիարքը ընտրվել կաթողի-  
կոս»:

Մեզ գրում են ԱՍՏՆԱՅԱՆՔԻՑ հետեւեալը:  
«Թղթակցի գրութիւնը շատ դժուար է գաւառա-  
կան քաղաքում: Որ և է թղթակցութիւն անկա-  
րող լինելով հերքելու, մարդիկ, իրանց մերկա-  
րած զգալով, դիմում են բարբարոսական միջոց-  
ներին: Այս օրերս էլ այստեղ երկու եղբայրներ ի-  
րանց տան մէջ ծնծել են իրանց երբեք եղբօրը,  
որովհետեւ սրա թղթակցութիւնը նորերումս արդ-  
վել է մի հայ լրագրում: Մեծող եղբայրներից  
միշտ հոգևորական է: Ուրեմն այդ էր պակաս. հի-  
մա ինկվիզիցիա է սկսում մտնել մեր մէջ»:

ԱՍՏՆԱՅԱՆՔԻՑ մեզ գրում են: «Յայտնի է ձեզ  
արդէն որ հայր Խորէն վարդապետ Ստեփանէն  
Աստրախանի թեմական դպրոցները վերադառնալ  
է նշանակված: Նրա այստեղ գալը լաւ ազդեցու-  
թիւն ունեցաւ հայ հասարակութեան վրայ և վերջ  
գրեց բոլոր խոսակցութիւններին: Աստրախանի  
հայերը շատ ստան էին, առհասարակ, դէպի ի-  
րանց աղքատի դպրոցները: Այժմ հայր Խորէնի  
քարոզները ներդրութեան տակ նշանակում է  
հայ հասարակութեան մէջ ցանկութիւն մեր դըպ-  
րոցներին իրանց կոչման համեմատ արժանաւոր  
դիմել: Յայտնի է ձեզ արդէն որ մեր դպրոցները կը  
բարեկարգվեն հայր Ստեփանէի ջանքերով և նոր-  
ընտիր հոգաբարձութեան օգնութեամբ: Այժմ  
միջնակարգական այն է, որ թեմական տեսչի և  
հոգաբարձուների ջանքերի շնորհով, դպրոցներում  
կարգվում են հերթակալ հոգաբարձուներ, տեղի-  
ն ունենում նիստեր և խորհրդներ թեմական վե-  
րատեսչի հետ միասին: Հասարակութիւնը այսպի-  
սի բարեկարգութիւն վաղուց տեսած չը լինելով,  
այժմ շատ դժ է թէ վերադառնալ և թէ հոգաբար-  
ձուներից»:

Հարունակում ենք կարգալ Բաֆֆին «Կայծեր»  
վերնագրով գրել առաջին հատորը: Մեր կարծի-  
քով դա Բաֆֆիի բոլոր միջնակարգ հրատարակ-  
ված հեղինակութիւններից ամենաաշխույժանն է:  
Նա կարգաւորում է վերին աստիճանի հետաքը-

բախտ վիճակը չէր ունենար:—Արդեօք չը պիտի  
գնայ օր մը որ նոյն խոստովանութիւնը ընեն  
Ներսէս սրբազանի համար, երբ այլ ևս չառ ու է:  
Խրիստեան սրբազանի պատրիարքութիւնը շատ և  
շատ աւելի արդիւնաւոր պիտի ըլլար եթէ չը հանդի-  
պէր ներքին անխիղճ թշնամիներու. եթէ Էմիւս-  
թին փոխանակ մեծ գումար մը յատկացնելու նո-  
րա տապալման, ծախսեր այդ գումարը ազգին  
տունը շինելու կամ թէ հանգարտ կենար: Բայց  
այն ատեն խախտած կըլլար ազգային աւանդու-  
թիւնները: Պէտք է ջանջել, պէտք է կործանել  
ամեն անոնք որ կը շինեն:

Կան յատկութիւններ որք եթէ առաքելութիւն-  
ներ են Քրիստոսի պարզ վարդապետի մը համար,  
գոյց է մահացու միջոցը համարուին պատրիարքի  
մը կամ կաթողիկոսի մը համար: Խրիստեան սրբա-  
զան իբր պատրիարք ցոյց տուաւ այդ առաքելու-  
թիւնները կամ թերութիւնները, ինչպէս կուղե-  
բնէր: Պատրիարք Խրիստեանը պարզապէս էր և  
պարզ, Խրիստեան վարդապետին պէս: Ըլլալով աղ-  
ղի մը պատրիարքը աղքատական կեանքով, հեռու ա-  
մեն շուրջ, ամեն արտաքին ցոյցէ: «Ազգը պարտ-  
քի ներքն է, կըսէր, միթէ անկեղծ իր պարտքը»:  
— Բայց կը մոռնար թէ՛ Արեւելեան ժողովուրդ-  
ները արհամարհանօք կը հայան պիտական անձանց  
վրայ որք կարհամարհեն ունեւճառով պատմութե-  
ան: Պարզ էր նաեւ, շատ պարզ, իր տեսակցու-  
թեան մէջ: Անխտիկ կընդունէր ամեն ոք, անուշ  
էր ամենուն հետ, փոքրիկ և մեծի մէջ չէր գնի  
շատ տարբերութիւն, միշտ յիշելով Քրիստոսի  
վարդապետ ըլլալը: Սակայն մենք շատ կիրթ չենք  
և շուտով երես կանոնք: Մեր հին եպիսկոպո-  
սաց և պատրիարքաց աւանդութիւնն էր խոժոռ  
դէմք մը ունենալ: Խրիստեան սրբազան կարծես թէ  
ժամանակին հետ մարդիկ ալ յառաջացած են:

թրութեամբ և կարծում ենք որ այդ աշխատու-  
թիւնը շատ մեծ տարածութիւն ու շատ լաւ ըն-  
դունելութիւն կը գտնի հայոց հասարակութեան  
մէջ: Խոսելով այդ գրքի մասին, չենք կարող չը  
յայտնել մեր ուրախութիւնը, որ այժմ հայերիս  
մէջ գտնվում են անձինք, պ. Ալեքսանդր Մէլիք-  
Հայկազեանի պէս, որոնք սէր ունեւում դէպի մայ-  
րենի զրականութիւնը, իրանց նիւթական միջոց-  
ներով նպաստում են հայոց ընթերցանութեան  
գրքերի հրատարակութեանը: «Կայծեր» կուղե-  
բաֆֆիի աշխատութիւնը, ինչպէս յայտնի է, պ.  
Ա. Մէլիք-Հայկազեան իր հաշուին է տալիս:

Մեծ իշխան Միքայէլ Նիկողայիւի նախագա-  
նութեամբ կազմված յանձնաժողովին, ինչպէս  
հաղորդում են մայրաքաղաքի լրագրիւնները, ներ-  
կայացրած են այլ և այլ կարծիքներ կողմանա-  
սրանդիտի մասին, այդ հարցում շահ ունեցող  
կողմերից: Այդ բոլոր կարծիքները բաժանվում են  
երկու տեսակի վրայ: Մի կողմը պահանջում է  
ոչնչացնել կողմանաւ տրանզիտ, միւս կողմը ա-  
ռաջարկում է պահպանել նրան: Մանուֆակտու-  
րային ուսուցիչները կողմանաւ ներկայացուցիչ-  
ների կարծիքով այժմ եղած կողմանաւ տրան-  
զիտը համապատասխան չէ ուսուս առևտրի շահ-  
րին, որովհետեւ իբր թէ նպաստում է օտար աղ-  
քանքների կոնտրաբանդային Ռուսաստանին օտ-  
մաններում: Մի և նոյն ժամանակ նոյն ներկա-  
յացուցիչների կարծիքով բացի տարվայ այն ժա-  
մանակից, երբ ուսուցիչները կարող են ու-  
ղեւորվել դէպի Պարսկաստան Վճրախի ճանապար-  
հով, տարվայ մնացած ժամանակները տրանզիտը  
միջոց է տալիս օտարներին իրանց ապրանքները  
աւելի արժան գնով տեղափոխել Պարսկաստան,  
քան թէ այդ կարող են անել ուսուս վաճառական-  
ները: Մանուֆակտուրային արդիւնաբերութեան  
ներկայացուցիչների կարծիքով Բազուկ երկաթու-  
ղու գծի բացվելով, վնասը որ հասցնում է տրան-  
զիտը ուսուցիչներին արդիւնաբերութեանը, աւելի էլ կան-  
ն է ժամանակով կողմանաւ տրանզիտից տուած  
այդ վնասը ներդրութիւն կունենայ և ուսուս  
առևտրի վրայ Միջին-Ասիայում: Միւս կողմը, որի  
մէջ գտնվում են նոյնպէս արդիւնաբերութեան և վա-  
ճառականների, յայտնում է, որ տրանզիտի կա-  
տարեալ փակվելուց աւելի վնաս կարելի է սպա-  
սել պետութեան համար քան թէ օգուտ, որովհե-  
տեւ արանդիտի ճանապարհի փակվելու հետ միա-  
մեծ, կատաղաբարութիւնը անշուշտ կը զրկվի թէ  
անմիջական և թէ կողմնակի օգուտներից, որոնք  
կապված էին տրանզիտի հետ: Իսկ Պարսկաս-  
տան բերվող ապրանքները, ինչպէս մանուֆակ-  
տուրային ապրանքներ և շաքար, դարձաւ կը

ինչ որ էր ներքը, նոյն արտաբերուած ցոյց տուաւ:  
Խաղաղեցաւ:—Խրիստեան սրբազանի ամբողջ կը-  
պարանքը ազգով է: Հայկական վեհ տիպ մը կը  
կրէ, և խոր տպաւորութիւն կընէ զնա տեսնողին  
վրայ:—Բարեկ հայկերայթի մը ատեն, պ. Պայտի,  
այն ատեն Աստուծոյ դեսպանն ի Ֆրանսա, կըսէր  
իր բարեկամաց: «Այսօր կը փախազէի պատկե-  
րահան ըլլալ և գնել այս հայ սրբազանին դէմքը,  
այնքան զիս յախճատակէ»:

Ներկող կէտ մը որուն վրայ պէտք է մտա-  
ծենք, եթէ Խրիստեան սրբազանը ուզենք կաթողիկոս  
ընել, այդ է սրբազանին ստակի յարգ չը գիտնալը:  
Փողը նշանակութիւն չունի Խրիստեան եպիսկոպոսի  
համար: Կա ըսել է որ անտեսադիտութեան կա-  
րեւորութիւն չընծայէր:—Այնպիսի ատենի մը մէջ  
ենք որ բաւական չէ հայոց կաթողիկոսին քաջ  
աստուածաբան ըլլալը: պէտք է նաեւ տեսնադիտ  
ըլլալը: Խրիստեան սրբազան իր պատրիարքութեան  
միջոցին յաջողեցաւ վճարել Պատրիարքարանի  
մեծ պարտքը, սակայն միւս կողմէ շատ Ընտրող  
սկզբունք մը ունէր: «Ազգին ստակը ազգին» կը-  
սէր: Գործի մը համար ստակ ժողովուած է, կը  
տեսնեն կեկէր այդ ստակը ուրիշ ձեւերով մը  
կը յատկացնէր: Երբ դիտողութիւն կընէին, կը պա-  
տասխանէր: «Միթէ այդ գործն ալ աղքին գործն է»:  
Առաջ մտնող իր գործը կը տեսնէր:—Եւ ոչ իսկ  
իր առած ստակին, ըրած ծախքերուն հաշիւը կը  
բռնէր, օր մ'ալ կը տեսնէր թէ պարտքի տակ ին-  
չպէս ծախք մը կընէր, չէր ուզեր եթէ պէտք  
չունէր: Ժամանակ կանցնի, հաշիւները փակուած  
են և ահա գործի մը համար ստակ պէտք կըլլայ,  
այն ատեն կուղէ: Այս պատճառներով տեղի տուաւ  
այնքան վատ զրպարտութեանց իրեն դէմ:—Չա-  
փազանց ողորմաճախութեամբ մը զրպանը ըս-

բերվեն այնտեղ, միայն իրանց ճանապարհի ու-  
ղեւորները կը փոխեն և կը հասնեն Պարսկաս-  
տան Տրապիզոնի ճանապարհով, որի վրայ եղած  
ճանապարհաճախը շատ բիշով աւելի թանկ  
լինի քան անդրկովկասեան ճանապարհով: Բայց  
աչքի առաջ ունենալով որ արտասահմանեան աղ-  
քանքների պատրաստելը աւելի է ժան և նստուած քա-  
ռուսաց ապրանքների արդիւնաբերելը, և  
տեղի վրայ էլ նրանք աւելի է ժան են լինում, և  
րեմն Պարսկաստանումն էլ արտասահմանեան  
ապրանքները աւելի է ժան կը ծախվեն քան ու-  
սաց ապրանքները: Ընդհակառակն, ուսումը կա-  
ծում են, որ կողմանաւ տրանզիտի շարժման  
աւելի ոյժ տալով կարելի է սպասել որ ուսուս  
ապրանքները աւելի մեծ թւով կը բերվեն Պար-  
սկաստան, մանաւանդ որ տրանզիտային արտա-  
սահմանեան ապրանքներով առևտուր են անու-  
նապարհապատանում ուսուսագետակ վաճառական-  
րից շատերը, որոնք միաժամանակ մտնում են  
այդ երկրի գործածութեան մէջ և ուսուսաց այլ  
այլ արդիւնաբերութիւնները:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ԹԻՐԻՔԻԱՅԻՑ

Երբեք, 12 փետրվար

Տխուր է Նրբորմի հայերի վիճակը, մանաւան-  
դապիսի ցաւալի դէպքից յետոյ, երբ ամբողջ  
հանդի հայերը իրենց կենաց ապահովութիւնը  
լրովին կորսված են համարում: Ընթերցող  
յայտնի է յիշեալ քաղաքի մասին չէ հայ քահանայ  
երեսից՝ ազգայնոց հասած վնասները, վերջի պ  
բազանից յայտնված տեղեկութիւնները առա-  
ողբալի են: Թէ և կառավարութիւնը զաղտնի ք  
դաշնակաւորութեամբ բանտարկեալները շատեր  
ազատեց, այնու ամենայնիւ ամբողջ հաշան  
հայերին զաղտնի հակողութեան է ենթարկել: Իսկ  
քանչիւր թիւը միշտ լրտեսում է իւր դրացի հայ  
այս մասին գիւղացու վիճակը անտանելի է դը-  
ձել, որովհետեւ իւրաքանչիւր հայ տներէց և հ  
գիւղերից գէները ժողովեցին: Մեծ պատասխ  
համարութեան և տուգանաց է ենթարկվում ա  
հայը որ իր տան մէջ գէներ է պահում. այս  
ապահովութեան պատճառաւ աւազակները և  
գիւղը սկսեցին մեծամեծ օգուտներ քաղել: Իս  
որին պէտք է դիմէ խեղճ հայ գիւղացին. թի  
կառավարութիւնը օձի պէս է նայում հայոց ի  
բայ: Վրէժանդութեան ողին օրից օր ներշնչ  
է թիւը բնակչաց արեւմուտ. կարծես մի սպա  
նալից ահաւոր արկած պատրաստ է ամեն բոլ

տակ չէր պահել և բացը կը մնար կարևոր պի-  
բերու ատեն:—Հոգու ճշմարիտ մեծութիւնն ուն  
«Բանի քանի անգամներ խրկած է դժուար օր  
բու մէջ ապրուստի ստակ այն խաղաղութեան  
կատարութեամբ կը մարտնչէին իրեն դէմ:—Բ  
այդ նուէրը դաղտնի խրկած է որպէս զի ան  
վրայ ճնշում չը բանեցնէ: Կը պատմեն թէ՛ չ  
անգամ խմբադիր մը ստակ կընդունէր, իր յոյս  
հատ օրերուն մէջ, անանթօթ տեղէ, կը կաթ  
որ այդ գումարը խրկուած է իրեն որ քաջապի  
և աւելի սատակ մարտնչի Խրիստեանի դէմ: Խ  
չէր գիտէր թէ այդ զաղտնի բարկարար Խրիստ  
էր: Յաջորդ օրը կը տեսնէր աւելի կծու յոյս  
մը Խրիստեանի դէմ, որու պարտական էր իմ  
բը իր առջի իրկութեան հայը:—Խրիստեան սր  
գնաւ պարզ ու աղքատ վարդապետ եղած աս  
շատ անգամ կըլիար նաւամատոյց սպասել  
անցնի մի բարեկամ և տայ նաւուն ստակը: Կը  
դաղելէին, կը բախտեցին զնա թէ ազա՛հ, մարա  
է, չէին գիտէր թէ առջի օրը իր աղքատ քա  
պարտած է մի դժբաղդ հայ գրադէտի առջև  
անօթի էր և կը հայցոյր Աստուծոյ:—Նոյն  
պատրիարքութեան ժամանակը կը տեսնէին  
կար ճամփորդութիւն մը ոտքով կընէր, վասն  
քանի մը քալ առաջ ունեցածը բաժնէր է իսկ  
ճերու, առանց պահելու կառքի ստակ: Այ  
մարդկային դժբաղդութիւնը որ երբեմն սրտ  
ամենին մեծ ազնւութիւնը յանցանք կը սկս  
թէ Խրիստեան սրբազան բարձրանայ կաթողի  
տակն զան պէտք է մի քիչ բարեկեցիկ իր  
նոթիւնը, եթէ երբեք բնութիւնը կրնայ փոթ  
Անհրաժեշտ է տեսնադիտ խորհրդականներ  
մօտ ունենալ:

(Կը չարմանակի)

ում հայերին կու տալու. այս կասկածելի երկու-  
դի պատճառաւ հայ արհեստաւորները ոչ ոք փոյթ  
լուծի իւր գործը զործելուց. անգործութեան ժամանակ  
աղքատութիւնը խեղճերին վերջին յուսահատու-  
թեան է հասցընել: Թիւրքերը իւրեանց ռիսակալու-  
թեամբ հայերից առեւտուր չեն անում. հրապա-  
րակական անպատկառ հայտանքները իւրաքան-  
չիւր թիւրք տալիս է իւր դիմացի հային. ամեն  
տեղ լրտեսներ պակաս չեն. հայը հայի հետ կաս-  
կածանք է խօսում. ամեն մի մտտի պատճառնե-  
րի համար օրական հարիւր հայի են ծեծում. խ-  
րաքանիւր թիւրք ինքը իւրեան գատակոր է հա-  
մարում հայից վրէժ առնելու համար:

Թիւրքերի արածը արգարանում է, ինչպէս պատ-  
մում են, մի քանի կաթօլիկ և բողոքական հայոց  
կատ գաւառականութեան պատճառաւ. դրանցից մի  
քանի ֆանատիկներ իրանց կրօնական վարքով  
ատելութեամբ այսպէս են վերաբերում դէպի իւ-  
րեանց լուսաւորչական հայ եղբայրները. գտնվի-  
ցան կաթօլիկ հայեր, որոնց համար ուրախութիւն է  
լուսաւորչականաց դառն վիճակի նկատարկութիւնը.  
կատակաբարութիւնը ևս խիստ ջերմ է համակրում  
մասնիներին: Արդէն կատակաբարութիւնը երբ հայ  
լուսաւորչական վասակ քահանայի շնորհիւ գաղտ-  
նի կարծեմ ընկերութեան մի քանի թիւրքերը  
ձեռք բերեց, կարգադրեց և թարգմանողները  
հայ կաթօլիկ էֆէնդիներ էին, որոնք այլ և այլ  
մեկնութիւններ կը տալին անշունչ գրաւորներին.  
սորանց նախանշանն է մի պարսկ, որ ի հարկէ  
իւր վարձատրութիւնը կը ստանայ. նրան խոստաց-  
ված է մի նշանաւոր պաշտօն:

Արդէն իրգրումից ուռնները մեկնելուց ի վեր  
թիւրքերը ցանկանում էին մի պատեհ ժամանա-  
կում հայերից վրէժ առնելու. ներկայ դէպքում  
որքան որ թիւրքերը ոգեւորւած էին հայոց դէմ,  
սակայն հայերի յոյժը խիստ մեծ էր (Բուսաց հիւ-  
պատոսի պաշտպանութեան վրա: Բայց պ. հիւ-  
պատոսը հակառակը վարվեցաւ. ոչ թէ միայն  
չը միջամտեց, այլ երկու տեղացի ուսանալատակ  
բանտարկեալ հայերի աղաւթութեան համար ևս  
անտարբեր մնաց: Եթէ Տաճկաստանում, ծած և  
մնած երկու հայեր վերջին պատերազմի ժամանակ  
ուսանալատակ գրուելով ներկայ դէպքում մաս-  
նակցել են իւրեանց հայրենակիցներին՝ դորանով  
չէ կարելի ասել և կամ համոզուել որ ամբողջ  
ուսանալատակ հայերը ստուգապէս ունեցել են  
յարարեութիւն իւրերում: Դէպքում: Եթէ ու-  
սանալատակ հայը, Հայաստանի սովի ժամանակ  
կարեկից է եղել իւր թշուառ եղբայրներին և օգ-  
նել է նոցա այդպիսի դէպքերում, դորանով ևս  
ներկայ դէպքի համար, չէ կարելի մեղադրել ու-  
սանալատակ հայերին: Ընդհակառակն Անդրկասցոյ,  
Գաղիկասցոյ և Պարսից հիւպատոսները, բոլորովին  
պաշտպան հանդիսացան անօգնական հայերին,  
մասնաւոր նորանց որ ցարդ ևս տանջվում են  
բանտի խորշերում, և գուցէ երկար կը մնան  
որովհետեւ կառավարութիւնը զեռ շատ հետազո-  
տութիւններ ունի այս մասին անելու. նա կաս-  
կածում է որ մի գուցէ ուսանալատակ հայերից են ներ-  
շնած այսպիսի շարժումներ տեղացի հայերում.  
այս կարծիքը ստուգելու համար թիւրք հաղարա-  
պետ իրաւիւր բեկը, որը դիմէ հայերին լաւ խօ-  
սելու, յատուկ պաշտօնով Տիֆլիս ուղարկուած է  
որ Կովկասի հայոց դիտարութիւնները հասկա-  
նայ. նա մինչև Աղէքսանդրոպոլ հասել է, իսկ  
Տիֆլիսում դեռ անորոշ է մնում նորա ընթացքը:

Գալով իրգրումի ներքին վիճակին, խիստ ցա-  
ւալի է նա: Ժողովուրդը մի քանի կուսակցու-  
թեանց է բաժանվել: Դաւանք կամեմունք են գեր.  
Օրմանանիւն փոխել և կրկին նորա նախորդը  
Յարութիւն կոչակոչուսին հրաւիրել: Ազգային  
գործերը ներսի վրայ են մնում. դպրոցները յա-  
ռաժարվում իրենց և կանոնաւորութիւնից դուրս  
են: Գիւղացի աղաքացիք վիճակը ստաւելապէս  
թշուառ տեսալ. մի քանի գիւղերում դպրոցի ա-  
նուն միայն կայ և ոչ գործ: Գիւղերը իւրեանց  
վիճակային վանքերը ունին, երբ վանք կայ ե-  
րկու և ոչ դպրոց ունին, ոչ միաբանութիւն և  
ոչ էլ կատարեալ հակոյ: Կարմիր վանքում տեսայ  
մի կիսակատար փառաւոր չնք, որը գիւղերի  
դպրոցի համար չինել է տուել նոյն վանքի տես-  
չութեան պաշտօնը վարող Մ. Հ. Լլիտերսնան-  
ցը, որը ուսաց բանակի հետ այն կողմն անցնե-  
լով իւր նպատակի հետ իւր շէնքն ևս կիսաւոր է  
մնացել: Յիշեալ պարսի վրա շատ աղքատիւ-  
կան գոյնիւսներ լսեցի մանաւանդ գիւղացիներից,  
որոնք նորա վերադարձին են սպասում. ասլ Ա-  
տուած որ այս տղերք յիշեալ պարսի սիրտը

դարձնէին դէպի իւր հայրենիքը, մանաւանդ այս  
միջոցին, որին շատ պէտք ունեն:

Գալով Բասենիան գաւառը առաւել թշուառ  
գտալ գիւղացւոց վիճակը. նոցա ներքին կեանքը  
որքան որ ցաւալի է անկրթութիւնից՝ արտաքինը  
ոչ ոք աւել միայն արժանի է. սորանց ևս կառա-  
վարութիւնը զինթափ է արել. առաջակութիւնը  
սովորութիւն է դառել, առանց նորան էլ կառա-  
վարութեան պաշտօնեաները կեղեքում են: Վեր-  
ջապէս չը գտալ մի հայ մարդ որ իւր կեանքից  
յուսահալած չը լինէր: Փոխանակ բարեկրօն-  
մանց, ինչ բարարարութիւններն են տիրապետել  
ամեն տեղ: Առհասարակ վանքերից, նոցա կա-  
ռուածների, վանահայր և հոգևորականների համար  
տեսած և լսած տեղեկութիւնները խոստանում  
են առանձին յօդուած հրատարակել:

\*\*\*

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ֆրանսիական մամուլը շատ զանազանակերպ  
է վերաբերում դէպի նոր կազմված միջխորու-  
թիւնը: Կատարելապէս թշուառաբար վերաբերվե-  
ցին դէպի այդ միջխորութիւնը միայն աշակող-  
մեան և ծաղրալից ձախակողմնան անդամները,  
որոնք Ֆրերի միջխորութիւնը անուանում են  
մեծ միջխորութիւն առանց Գամբետայի: Գոր-  
ծունեայ աշխարհի վրա, այդ միջխորութիւնը,  
ըստ երեւոյթի, լաւ տպաւորութիւն գործեց, և  
զա նրանով է բացատրվում, որ ամենքը հաւատա-  
ցած են նրա եռանդոտ կառավարչական գործու-  
նեւթեան մէջ: Սենատում և պատգամաւորների  
ժողովում կարգադրեցաւ միջխորութեան այն բա-  
ցատրութիւնը, որի մէջ միջխորութիւնը, ի միջի  
այլոց, կարծիք յայտնեց ներկայ ժամանակում  
սահմանադրութեան վերաբնութեան դէմ: Նշա-  
նակում է, մի անգամից միջխորութիւնը արմա-  
տականներից հրաժարվում է:

—«Gaulois» լրագիրը հազորդում է. «Վերջի-  
րում պատմում էին մի դէպքի մասին, որ պա-  
տահել է Մարիլի թագաւորական պալատում երի-  
տատարդ Ալֆոնս թագաւորի և Ֆրանսիական  
հանրապետութեան ղեկավար Բարոն դէ-Միշէլի  
մէջ: Թագաւորը, իւր թէ, ասեց զինվոր դեսպա-  
նին. «Ձեզ մօտ միշտ մի և նոյն քաղաքականու-  
թիւնն է շարունակվում, պ. դեսպան», և մէջքը  
դարձրեց նրան: Թէպէտ այդ լուրը յետոյ հերք-  
վում էր, բայց գործին ծանօթ մի անձն հաւա-  
տացնում էր թղթակցին այն բանում, թէ զա իս-  
կապէս այդպէս է եղել: Այդ անձը կրկին ասե-  
լացնում է, որ նորին մեծութիւնը, հետեւալ օրը  
առաւօտեան հրամայեց իւր պալատականներից  
մէկին հաստատացնել ղեկավարին, որ ինքն կատա-  
րելապէս համակրում է այն երկրին, որի ներկա-  
յացուցիչն է դեսպանը:

—Մարիլից հեռագրում են փետրվարի 17-ին  
հետեւալը: Սպանիական պատգամաւորների ժո-  
ղովում Կանդա հարցմունք է անում կառավարու-  
թեանը Անդալուզիայում եղած անիշխանական  
շարժման վերաբերութեամբ և բացատրում է, որ  
«Սի ձեռքի» բնկերութիւնը կամենում է ոչնչաց-  
նել սեփականութիւնը և բանտարկներին ապստա-  
բեցնում է սեփականատէրերի դէմ: Նա կառա-  
վարութեանը խնդրում է խտտութեամբ վարվել  
յանցաւորների հետ: Ներքին գործերի միջխորը  
պատասխանում է, որ անիշխանականները արդէն  
դառն են նկատվում, և նախադասականները Ան-  
դալուզիայում միջոցներ ձեռք առնալ պաշտպա-  
նելու երկրի բնակիչներին անիշխանականների  
խմբերից:

—Փարիզից հեռագրում են փետրվարի 16-ին,  
որ Գլադստօն արդէն այցելեց Գրէվիին և Դա-  
մէ-Լակուրիին և մտադիր է այսօր այցելել Ժիւլ-  
Ֆերրիին: Դաւմէ-Լակուրի պատգամաւորութիւն  
յայտնեց թոյլ տալ Անգլիային գործողութեան  
կատարեալ ազատութիւն եղիպտոսում, և թէ Ան-  
գլիան համապատասխան զիշումներ կանի Ֆրան-  
սիային:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիայում մի մասնաժողով կազմվե-  
ցաւ Գալիլիին արձանը կանգնեցնելու  
համար և նրա անունով մի գրամաղուս պէտք  
է որոշվի բիօցոֆիական աշխատանքները խրախու-  
սելու համար: Մասնաժողովի նախագահն է  
«Royal Society» նախագահ Սպատակաւոր, իսկ  
անդամներն են՝ Գուրս Արանի, Լօնգօնի գերմա-

նական, իտալական, ֆրանսիական դեսպանները,  
Կէնտրերեան և Եօրիեան արքեպիսկոպոսները,  
Արքայը, Գլօնշիրեան և Նորտուեյքսիւնդեան  
դքսերը, Լորդ Բոստէ, Նորտուեյքս, Լօրդօ, Մակս  
Միլլէր, Հէրբերտ Սպենսէր, Տէննիսոն, Հէքսլի,  
Տինգալ և ուրիշները:

\*\*\*

Հէյնէի աշխիւն: Այս օրերս, Հէյնիւ Հէյնէի  
այրին, Մարիլից Հէյնէ, վախճանիկեցաւ Պաստի-  
ում, ուր նա վաղուց ապրում էր առանձնութեան  
և անյայտութեան մէջ: Նա աղատ էր չքաւորու-  
թիւնից և օգտվում էր մեծ բանաստեղծի հեղի-  
նակութիւններից ստացվող եկամուտներով: Մա-  
րիլից Հէյնէ 68 տարեկան էր: Հէյնէի կնոջը  
թաղեցին Վոնմարտեան գերեզմանոցում, ուր  
հանգչում են նրա ամուսին մարդու նշխարները,  
որը վախճանիկեցաւ Փարիզում 1854 թվին և թաղ-  
վեցաւ շատ հասարակ գերեզմանում, որի քարի  
վրա գրված է միայն. «Հէյնիւ Հէյնէ»:

\*\*\*

«Հնդկաստանը հնդկացիներին հա-  
մար»: Այդ բացականչութիւնը առ այժմ շատ  
զգուշութեամբ է արտասանվում, բայց անգլիական  
քաղաքագետները ուշադրութիւն դարձրին նրա  
վրա: Անգլիական շատ լրագիրներում արտասու-  
ված է մի յօդուած, որ տպվեցաւ Հնդկաստանի  
ամենանշանաւոր օրգաններից մէկի, «Progress»  
լրագրի մէջ, և որի տակ ստորագրել է այդ երկ-  
րում մի նշանաւոր գրագէտ: Ինչպէս երևում է  
այդ յօդուածից, Հնդկաստանի բարօրութեան մա-  
սին կազմած լաւ կարծիքը չափից դուրս սխալ  
է: Ահա թէ ինչ է ասում, ի միջի այլոց, հեղի-  
նակը. «Աղքատութիւնը սարսափելի կերպով ա-  
ճում է: Ուտեղեղներն զնեք կրկնապատկեցան,  
իսկ օրավարձը նոյնն է մնացել: Անգլիական ար-  
քապաշտութիւնը շատ թանգ է նստում գիւղա-  
ցուն և անթիւ բաղձութեան կողմնակից հակում-  
ները խրախուսելու և շարժիների անակութեան  
մասին եղած անգլիական օրէնքով: Յանցանքների  
թիւը շարունակ աճում է, որովհետեւ կառավա-  
րութեան հիմնած դատարաններում գործավարու-  
թիւնը չէ յարմարվում գիւղերին և շատ ծանրա-  
բեռնում է գիւղացիներին: Հարկերը անսխիւզ խը-  
տութեամբ են առնվում, չը նայելով անպտղաբեր  
տարիներին, և երկաւորակները ընդարձակ սխա-  
տեմը, որ միայն ստորադիակական նպատակներին  
է յարմարեցրած, մշտական ահապին զօրքի հետ  
միասին երկիրը դէպի անխուսափելի աղքատու-  
թիւնն են տանում»: Վերջաբանութեան մէջ հե-  
ղինակը ասում է. «Մենք պահանջում ենք աղատ  
և միատրու Հնդկաստանը, որը կը լինէր տեղա-  
ցիներին կառավարչութեան տակ»: Եթէ ուշադրու-  
թեան առնենք այն նշանակութիւնը, որ ունի  
Հնդկաստանը Անգլիայի գործութեան և հարստու-  
թեան համար, այն ժամանակ շատ հասկանալի  
կը լինի, թէ ինչու անգլիական լրագիրները հրա-  
ւիրում են կառավարութեանը ուշադրութիւն դարձ-  
նել այդ նշանների վրա և ժամանակակից վերա-  
նորոգութիւններով անբաւականութիւնների առա-  
ջին առնել:

\*\*\*

Ի իսարդ Վազնէի այրին ամեն տեղերից  
ցաւակցական հեռագրներ է ստանում իր ամուս-  
նու մահուն առիթով: Այ միայն Եւրօպայի ամեն  
ծայրերից, բայց և Ամերիկայի հեռաւոր տեղերից  
համակրական նամակներ են ստացվում: Տիֆլիս  
Վազնէի կտրեց իր գեղեցիկ մազերի հիւսերը, կա-  
րեց նրանց կարմիր առաւիյն բարձի մէջ, և դը-  
րեց հանդուցեալի կրծքի վրա: Դաւա քաղաքնե-  
րում Վազնէի մահուն լուրը ստանալու օրը  
ներկայացումները յետաձգեցին: Վազնէի թողեց  
տասնելու ամենայ Զիգֆրիդ անունով մի տղայ և  
Եւա անունով մի աղջիկ: Զիգֆրիդը, հօր սիրելին,  
ինչպէս ասում են, շատ տաղանդաւոր երեխայ է  
և շատ լաւ նկարում է: Երեխան բոլորովին երա-  
ժշտական կրթութիւն չէ ստացել, և Վազնէի կա-  
մենում էր, որ նա ճարտարապետ լինէր: Դաւա  
թատրոնների ներկայացումներն են պատրաստում,  
որոնցից զոյգաժամ արդիւնքը կամեմունք են յատ-  
կացնել որբերին կրթելու համար, չը նայելով որ  
նրանք փողի առանձին կարօտութիւն չունեն:  
Վազնէի մահից յետոյ մնացած յիշատակարան-  
ները արդէն բոլորովին պատրաստ են և տպված  
են, բայց դրանք ծախու չեն տրվի: Բոլորը երեք  
օրինակ է տպված: Չորս հատորների մէջ պարու-  
նակում է կոմպոզիտորի ինքնակենսագրութիւնը:  
Այդ հետաքրքիր հեղինակութիւնը Բազէլ է տրդ-  
ված, սրբագրական բոլոր թիւերից ոչնչացրած

են: Մէկ օրինակը տուած է Ֆրանց Լիստին, իսկ  
միւս պատկանում է փղբրիկ Զիգֆրիդին, երրորդը  
պահպանվում էր հանդուցեալի մօտ: Կարծում են  
որ այդ յիշատակարանները նորից կը հրատարակ-  
վեն:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆՑ

ԽԱՐԿՈՎ, 22 փետրվարի: Այսօր դատա-  
տանական պալատան վճռեց՝ Ֆիլիպպովին  
զրկել տաճարի իրաւունքներից և քաղաքի  
Օլոնեցկի նահանգը, արդեւելով մի տարվայ  
ընթացքում հեռանալ այդտեղից, մնացած  
մեղադրվածներին դատապարտեց կալանա-  
ւորման զանազան ժամանակամիջոցներով,  
բացի Մոշկովիչից և Ակսելրոսից, որոնք ար-  
դարացրած են:

ԼՕՆԻՍՆ, 22 փետրվարի: Համայնքների  
ժողովի մէջ Գլադստօն յայտնեց, որ բրի-  
տանական զօրքերի եղիպտոսից հեռացնե-  
լու ժամանակը կախումն ունի ի նկատի  
առնված նպատակների աջողութիւնից:

ԲԻՒՒՍԵԼ, 22 փետրվարի: Այստեղ խու-  
զարկեցին ուսու ուսանողները տները և զը-  
տան, որ նրանք կապեր ունեն ֆրանսիա-  
կան զաղանի ընկերութիւնների հետ: Սահ-  
մանի վրա կալանաւորեցին ուսանող Շե-  
սուպովիչին, որի մօտ դրան 12,000 ֆրանկ  
ոսկով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 փետրվարի: Մազի-  
ւէօի նահանգի մէջ բացված է պետական  
բանկի բաժին: Արաիւրիային տուած հրա-  
մանով գներայ ֆերդինանդ յատեր պահան-  
ջում է ամրոցների և ծովազրերի թնդա-  
նութիւնը հրաձգութեան արագութիւն: Թա-  
զաղական մանաժողովը յայտնում է, որ  
Ժառանգը և բնակարաններ վարձելու և  
կապալներ վերցնելու առաջարկութիւննե-  
րով զիմեն բացառապէս իրան և ոչ թէ  
մասնաւոր գրասենեակներին: Մասնաժողովը  
գտնվում է Կրեմլում Կապալերիական կօր-  
պուսի մէջ: Լեւոնտովին արձան կանգնեց-  
նելու համար Պիատիգորսկի մէջ յայտն-  
վում է երկրորդ կօնկուրս:

ՎԻԵՆԱ, 22 փետրվարի: Դուռով կը  
սկսեն զինաւորել Պրժեմիսլը և Գալիցիայի  
ուրիշ կէտերը: Պատգամաւորների ժողովի  
մէջ բուսին Կուլաչիօվսկի մի ճառ արտա-  
սանեց բուսինների զրուխեան մասին և  
յայտնեց, որ նորեւում տեղի ունեցած  
քաղաքական դատը վկայում է բուսիններին,  
որ նրանք չեն կարող օգուտ քաղել սահ-  
մանադրական իրաւունքներից և որ դիտնա-  
կան պարագմունքները նրանց համար յան-  
ցանք են համարվում, որ ինչպիսի հօվա-  
նաւորութիւնը եկեղեցական շրջանի մէջ  
սաստիկ վրդովմունք է պատճառում և որ  
իրանց վրիւլութեան համար բուսինները  
ստիպված կը լինեն կրօնափոխ լինել:

ՓԱՐԻՑ, 22 փետրվարի: Երէկ պատգամա-  
ւորների ժողովի մէջ տաք վիճաբանութիւն-  
ներ կային ռահմանադրութեան վերաբնու-  
թեան մասին: Ֆերրի պատասխանեց մաս-  
նաժողովի ղեկուցանող Ժիւրիին, որ պահան-  
ջում էր ընտրել սենատը ընդհանուր ձայ-  
նաւորութեամբ և զրկել նրան պատգամա-  
ւորների ժողովը արձակելու իրաւունքից:  
Միջխորը պատասխանեց, թէ ի նկատի  
առնելով մեծամասնութեան տրամադրու-  
թիւնը, որ խաղաղութիւն և աշխատանք է  
ցանկանում, այժմ փոսնաւոր է յարուցա-  
նել սահմանադրութեան վերաբնութեան  
հարցը և անբաւականութիւններ յարուցա-  
նել երկու ժողովների մէջ:

Խմբագիր—Հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Типогр. Главн. Упр. Главнотач. гражд. час., Лор.-Мелик. ул. кав. д.